Սագօն: Երկուսն էլ իմ հին աշակերտակիցներն էին, որոնք փախան մեր դպրոցից ճիշտ այն ժամանակ, երբ Կարօն անյայտացաւ: Բայց մի բան, որ դժուարացրեց սկզբից ճանաչել նրանց, այն էր, որ թէ Կարօն եւ թէ միւս ընկերներս, բոլորն էլ հագուստները փոխած էին. նրանք չէին հագնուած այն ձեւով, որպէս առհասարակ հագնւում են Պարսկաստանի հայերը, այլ կրում էին մի տեսակ զգեստ, որ յատուկ է Մշու կամ Բաղէշի կողմերի լեռնաբնակ հայերին, որը շատ չէ զանազանւում քուրդ էշիրաթների հագուստից:

Սագօյի իսկական անունի Սարգիս էր, բացի դրանից, մեր դպրոցում նրան կոչում էին «սատանայի եղունգ». այդ անունը ստացել էր նա իր չափազանց խորամանկութեան, ճարպկութիւնների եւ անհանգիստ բնաւորութեան պատճառով:

Ինձ երեւաց, թէ այժմ նա աւելի փոքրացել էր եւ համարեա գունդի ձեւ էր ստացել, թէեւ առաջ նոյնպէս բաւական կարճահասակ տղայ էր: Նրա դէմքը բոլորովին կատոի կերպարանք էր կրում. անփոփոխ էին մնացել միայն շիլ աչքերը, այն վաղեմի դիւական աչքերը, որ միշտ արտայայտում էին եռանդ եւ մի առանձին կենդանութիւն:

Ասլանը շատ չէր փոխոել. նոյն խաղաղ դէմքը իր բոլոր քնքշութեամբ, նոյն երկնագոյն հեզ աչքերը, հովանաւորած խիտ թերթերունքներով, նոյն անմեղ ժպիտը, — բոլորը նոյնն էր: Միայն նրա շէկ մազերը այժմ աւելի մուգ գոյն էին ստացել եւ երեսի ճերմակ կաշին կորցրել էր իր վաղեմի սպիտակութիւնը: Մարմնի կազմուածքը մնացել էր նոյնպէս նուրբ, որպէս առաջ, միայն այժմ փոքր-ինչ կոլոլոել էր նա եւ հասակը աւելի գեղեցիկ եւ վայելուչ ձեւ էր ստացել:

Ասլանը միակ աշակերտն էր, որին ես շատ էի սիրում. նա միշտ բարի էր դէպի ինձ, եւ քիչ չէր պատահում, որ ամբողջ ժամերով պարապւում էր ինձ հետ. նա մեր դպրոցի ընդունակ եւ յառաջադէմ աշակերտներից մէկն էր: Ինչ՞ պատճառով նա թողեց մեր դպրոցը, — ես հիմա էլ չգիտեմ, միայն նա թողեց մեծ ափսոսանքով, կարծես մի բան կապած լինէր նրա սիրտը այն «դժոխքի» հետ...

Մեր դպրոցում ես, Կարօն, Ասլանը եւ Սագօն այնպէս սերտ կերպով կապուած էինք միմեանց հետ, որ համարեա կազմում էինք մի անբաժան չորրորդութիւն: Բայց երբ նրանք միասին անյայտացան մեր քաղաքից, ամենեւին չյայտնեցին ինձ իրանց նպատակը, երեւի նրա համար, որ ինձ անյարմար գտան իրանց ընկերութեանը, որովհետեւ ես նրանցից հասաւով շատ փոքր էի եւ բոլորովին անփորձ: Այնուհետեւ նրանց մասին ամենեւին ստոյգ տեղեկութիւններ չկային, միայն երբեմն խօսւում էին զանազան օտարոտի